

Վ ասն զի ստեալ նիւթական գլխոյ տաքութիւնը , ծերոց կրնայ պատճառել պտոյտ գլխոյ , կաթուած և այն . իսկ ընդհակառակն ոտքի տաքութիւնը բոլոր արեան շրջանները կը զօրացընէ , կուրծքի ու գլխոյ ալ շատ կ'օգնէ :

Դայց աս ալ պիտի նային որ կրակարանին քով շատ չկենան . որովհետեւ բաց՝ ի ան վտանգաւոր դիպուածներէն որ վերը ըսինք , շատ անգամ նաև արիւնին ալ կրնայ գլուխնուն զարնել ու անկէ գէշ հետեամքներ առաջ գալ :

Վ ասն զի ցուրտէն պակաս վնասակար չէ սաստիկ տաքն ալ : Եւ ամենեին պէտք չէ զարմանալ աս բանիս վրայ . վասն զի թէ որ մէկ սաստիկ կրակի մը տաքութիւնը ամենազօրաւոր կտրՃի մը վրայ ալ երբոր վնասակար մարմրուք մը կը բերէ , բնչ ըներ արդէն ուժէ ընկած ու տկար ծերու մը : Արեմն պէտք է որ տաք եղանակաց մէջ կէսօր ատեն տներնէն ալ դուրս չելան ծերերը , ու եղանակին տաքութիւնը գաղջ ջրի մէջ մտնելով իրենց բարեխառնեն :

Լ ուսոյ կողմանէ աս միայն կը յիշեցնենք որ սաստիկ լցու միշտ և ամենուն աչքին հտմար ալ վնասակար սեպուած է , ևս առաւել ուրեմն ծերոց :

Օ գեստ ու հագութիւն :

Օ սրաՄԵԱԼ ծերերը որովհետեւ կենդանական ջերմութիւննին շատ կորսընցուցած են , անոր համար պէտք է որ իրենց ներքին ջերմութիւնը արտաքին օդին ջերմութեանը հետ բարեխառն ըլլայ , և շատ աղէկ ու օգտակար բան է որ մէկ երկայն բրդէ զգեստ մը մարմիններնուն վրայէն և կամ դրսէն մուշտակ՝ մը հազնին ձմեռուան մէջ . որովհետեւ աս տեսակ զգեստեղէններէն չափաւոր կերպով տաքնալով , չեն ալ նեղուիր ուրիշ զգեստներու ծանրութէնէն : Կյուխնին ոչ այնչափ բաց և ոչ ալ սաստիկ գոց պիտի բռնեն : Վհնտակները ² կրնան մէկ թեթև կեղծամամ ³ մը կամ մէկ բրդէ բարակ զտակ

1 Քերտ :

2 Տաղ :

3 Փեռութ :

մը դնել : Վէելորդ կը սեպենք խօսիլ հոս մանրամասնաբար ծերոց նաև ուրիշ ամէն զգեստեղինացը վրայ . միայն աս ալ կը ծանուցանենք որ այսպիսէաց զգեստը ամենայարմար պիտի ըլլայ իրենց մարմնոյն , մանաւանդ թէ քիչ մը աւելի լայնքան թէ նեղ : Վ ատ օգտակար բան է այսպիսէաց ամիսը երկու իրեք անգամ մը նաև գաղջ ջրի մէջ մտնելը , մանաւանդ աշնան միջոցը . իսկ պաղ , կամ հանքային ջրի մէջ և կամ ծով ամենեւին առանց բժշկաց հրամանին պէտք չէ մտնեն :

Վ գտաքին մարմնոյ մաքրութեանը՝ որ մարդուս միշտ առողջ ըլլալուն գլխաւոր պատճառներէն մէկը կը սեպուի , ծերերն ալ մեծ փոյթ պիտի ունենան : Վ ս բանիս հարկաւորութիւնը Արոպացիք այնչափ ձանցած են , որ Վալեոնոյ քաղաքին դպրոցին մէջ ալ մասնաւոր զգուշութեամբ գրուած է եղեր աս երկու տող համարու խմաստը :

Թէ որ կուզես առողջ ըլլաւ
Զեռքդ չանա ըստեպ լուաւ :

ՊԱՅՏԱԲԱՐՈՒԵՍՏ

ԳԼՈՒԽ Զ 1.

Պ աղէ առաջ եկած ներքին հետանութիւնն նէր :

Ա . Տաճէրէն տօղուճա ըսուած յառը :

Վ ս ցաւը և պէօյբէ-էբէն կամ կշաացաւ ըսուածը մէկ տեսակ են . այսինքն տօղուճան տենդ ¹ է , և միւսը սև տենդ կամ վարցաւք ² է . ինչպէս որ երեմն ալ տօղուճային գեղը շուտով չհացընես նէ՝ կշացաւի կը գարձնէ . շատ անգամ աս երկու ցաւը մէկտեղ կամ իրարու ետեւէ կուգան կենդանւոյն վըրայ :

Կենդանւոյն շատ ցաւերը պաղէն կը պատճառին , ինչպէս աս ցաւերն ալ , որ

1 Ասկէ առջի գլուխը տես հատ . Զ . երես . 333 :

2 Հիւմն :

3 Գարք հիւմն :

Ճամբան սաստիկ նեղութիւն քաշած
կ'ըլլայ , քրտնած կամպաղած կուգայ ,
կամպաղ հովուն դիմացը քրտնած բաց
կը քացուի , կամ կը կայնի , կամ թէ
կապուած ախուր ցուրտ կ'ըլլայ , պաղ
կ'առնէ , աս ցաւին կը հանդիպի . ա-
մառն ալ ձմեռն ալ կ'ըլլայ : Ը ատ ձիեր
ուտելէն չեն դադրիր , աղէկ կ'ուտեն .
բայց ոմանց ալ ծնօտը կը գոցուի , կեր
չկրնար ուտելնէ՝ անոր ալ ճարը չկայ .
երկու իրեք օրքթէն հւալով կը մեռնի :

Ի՞ս ցաւին նշանները ասոնք են :
Չիուն ականջները թոյլ և պաղ կ'ըլ-
լան . կերպով մըն ալ ցցուած կը բռնէ
զանոնք . քթին մէջը պաղ կ'ըլլայ : Ա-
քին կոպն ալ կերպ մը կ'ըլլայ . թէ որ
ծնօտին տակին բռնցի զարնես նէ , աչ
քին կոպը աղէկ մը կը դառնայ , ճեր-
մակը դուրս կ'իյնայ :

Ո՞ւէ որ վախ ունիս անասնոյդ մեռ-
նելէն , ու խարանին՝ դեղը ֆնասակար
չես սեպեր նէ , մէկ հատիկ դարմանը՝
աս է : Ա զին երկու կողմէն ալ իրեք
իրեք , կողերէն ալ իրեք իրեք խարան .
առջի ոտքերուն հէօհէք ըսուած տեղէն
ալ քիչ մը վեր (որ ծնկէն վեր մէջի
կողմը կ'իյնայ) իրեք իրեք խարան .
կ'ուզես նէ ետեկ ոտքերուն մէջի կողլ-
մէն ալ իրեք իրեք խարան . ալ բան չու-
զեր , մէկէն կ'աղէկ կցընէ : Բայց թէ որ
ձին յարգը կը կորսընցընէ լսելով՝ աս
չես ըներ նէ , հետեւեալ նուսխաները
նայէ , որն որ ուզես ան ըրէ :

Ո՞ւէ որ շուտով իմացար , ալ ձիդ մի
նեղեր , տաք տեղ կապէ , համետ կամ
ուրիշ բան ունի նէ՝ վրայէն առ , վեր-
մակներով² կամ հաստ թաղիքներով³
փաթթէ ու սաստիկ տաք պահէ :

Ո՞ւէ որ նոր է , աս դարմանն ալ հա-
ցուր , որ ատեն անցուցածին օգուտ չու-
նի : Խարանին երկաթը այրէ , գլխուն
մազը ճակտին մէջտեղ ուր որ կը լմըն .
նայ՝ անկէ ծակելով , և կաշին մսէն զա-
տելով՝ դէպ 'ի վեր կէս մատի չափ խո-
թէ . ետքը պՃեղ մը ստըկած սխտոր
ալ անուշաղրին՝ սե պղպեղին թաթ-

խէ , ան ծակուած տեղը անցուր՝ թող
մնայ . անկէց կը սկսի ջուր վազել . և
որովհէտեւ ամէն երակներուն գլուխը
հնն է , ասով բռնուած երակները կը
թունան , ցաւը կ'երթայ , կ'աղէկնայ :

Խսկ թէ որ օր անցեր է , դարձեալ
նոյն տաք պահէլու դարմանները ըրէ ,
ու ականջին մէջի երակներէն արիւն
առ . և մէյմ'ալ պոզին տակէն չորս մատ
վար չափելով՝ մէջի կողմը ածելիով ա-
րիւն առ խաչածե կտրելով . և ասանկ
իրեք անգամը ըրէ երկու օրը մէյմ' վեց
օրուան մէջ : Դարի կամյարդ մի տար .
վարսակը խաչէ , տոպրակին մէջ լից ,
մէկէն գլուխը անցուր՝ որ գոլորշին գը-
լուիր տաքցընէ , միանգամայն տաք տաք
ուտելովն ալ փորը տաքնայ , քրտինքով
մնայ , մանաւանդ որ վարսակն ալ փորը
լցծ կը պահէ . ասոնցմով շուտ կ'առող-
ջանայ : Խտքն ալ երբոր աղէկի դառ-
նալ սկսի , քիչ քիչ վրան թեթեցուր ,
և կամաց կամաց դուրս հանէ ժուռ ած-
ցուր , անկէց ետեւ հեծիր ալ :

Դարձեալ , բարկ օղիով կողն ու վի-
զը ուժը հասածին չափ չփէ , ետքը
ականջին ետեւը խարէ երկաթով . և
երկու հարիւր տրամմեղը , յիսուն տը-
րամծեծած սե պղպեղով՝ քիչ մը տաք-
ցուր , ձագարով՝ մը բերնէն խմյուր :
Խտքը երկու հատ ոչխարի մորթ մանր
աղով ու սե պղպեղով համեմէ , մէկը
վղին՝ մէկան ալ մէջքին պլէ ու աղէկ
մը կապէ :

Տեղը տաք ըլլալը , վերմակներով
կամ թաղիքներով պլէլը , խաշած տաք
վարսակը գլխուն անցնելը , ժամը ան-
գամ մը նորոգելը , որ գոլորշիովը աւելի
տաքնայ , վերը ըսածիս պէս պիտի ըլ-
լայ : Ա սանկ իրեք չորս անգամ փոխե-
լէդ ետեւ , վարսակը ուտել կը սկսի և
կ'աղէկնայ :

Դարձեալ , ոմանք ասանկ կ'ընէն .
թէ ամառ և թէ ձմեռ աս ցաւով բըռ-
նուած ձին ջուրը կը խոթէն , անսանկ
որ միայն ականջները դուրս մնան . եր-
կու իրեք ժամ կը կայնեցընէն , ետքը

1 Տառ :

2 Երբւան :

3 Քեւէ :

4 Կըլլալը :

1 Խուռակ :

կը համեն , մէկէն կը հեծնան , կը յոդ-նեցընեն . անկէց ետքը տաք տեղ կը կապէն . միայն ասովլ կ'աղէկնայ կ'ըսեն . բայց ամէն ձիու պիտի չյարմարի :

Բ . Աշխայառ , որ է առաջիւրէն պէօյրիւ-կէրմէ ըսուածը :

Ի՞ս ցաւին ինչ ըլլալը վերը զուրցեցինք . նշաններն ալ ասոնք են . նախ կենդանին պտրտցընես ու ծնօտը վեր վերցընես նէ , աչքերը կը խոլորցընէ , անանկ որ աչքին սեր կը կորսուի , միայն Ճերմակը կ'երևնայ . երկրորդ՝ պոչն ալ կերպով մը ցցուած կը բռնէ կայնած և քալած ատենները . ետքի ոտքերն ալ բաց բաց ըղունկին վրայ կը կոխէ ապուշի պէս : Երրորդ՝ երկու կողմէն կշտերը կը ձգտին , և շատ ալ կը ցաւին , ձեռք գպցընել չխտար . վասն զի ան պարապ տեղուանքը առաջ նեղութենէ տանջուեր են , պաղն ալ որ առեր է նէ՝ ցաւերը եկեր հոն ժողվուեր են :

Ի՞նչի յօդուածին մէջ տաք պահելու կերպերը գրեցինք . կրակ ալ պէտք է նէ վառէ , որ սաստիկ տաք մնայ շունչն ալ մարմինն ալ :

Ի՞ս ցաւին դեղերը ասոնք են : Դարկ օղիով կշտի կողմերը աղէկ մը ուժով ուժով շփէ , թէ որ նոր է՝ կ'անցընէ :

Դարձեալ , կամ հումկուաւատի եղ և կամ կարագ քսէ ան տեղը , և վրան տաք հացի փոր կապէ . և քանի որ ասիկայ նորոգես , սապոնով ու տաք ջրով լուա . կ'ուզես նէ աս տաք հացը տաքցուցած քացախի մէջ թաթիէ և անանկ կապէ , կ'անցընէ :

Դարձեալ , թէ որ պիսակոտ ըլլալը փսաս չես սեպեր նէ , ան տեղերը դէպ 'ի փորուն երկու կողմը ետքի պարապ երակներովը կը խարեն , և տաք փոնէն նոր ելած բլիթը՝ երկուք կը ճղքեն , անոնց վրայ կը կապէն : Ի՞ս ցաւին ալ

աղէկ կուգայ ականջին մէջի երակներէն և պոմին տակէն արին առնելը . քանի մը օր անցնելէն ետև ականջներուն մէջը կէս կէս տրամի չափ չաղած կարագ խոթէ մատուցներովդ , վեց օրը իրեք անգամ՝ երկու օրը մէջմը , օրն երկու անգամալ սե պղպեղ փչէ քթէն վեր : Խմելու ջուրն ալ տաք տուր , կամ հինգ տրամի չափ ծեծած սե պղպեղ խառնէ ջրին հետ ու խմցուր , և ասան կով տասնըհինգ օր քրտինքով պահել նայէ : Եթէ կը տեսնես որ մեռնելու նշան ցցուց , և տասնըհինգ օրէն ալ աղէկնալու նշաններ ունեցաւ , քիչ քիչ վրան թեթեցուր : Ուէ որ օդը պաղչէ , զուրս հանել քալորնելսկսիր , ետքն ալ հեծնալով ժուռ ածցուր . և սկսէ տաք ջուրը կտրել , գաղջ տալ . գարի ալ սկսէ կերցընել , սակայն յարդի տեղ խոտ կամառուոյտ տուր :

Պ . Վ . Պ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խրէրիս աղբողջ գլուաւոր զօրութեանց վրայ :

ՀԻՆ ատեն ընդհանրապէս կը կարծուէր որ երկիրս անշարժ կեցած է և արեւ անոր վրայ դաւնալով գիշեր ու ցորեկ կ'ըլլայ : Դայց ետքէն այլ և այլ գիտութիւնները ծաղկելով և մտաց նախալաշարմունքները լուծուելով իմացուեցաւ որ երկիրս հաստատուն չէ , և ոչ միայն արեւուն վրայ իր տարեկան շրջանը կը կատարէ . այլ նաև ինքն իր վրայ դառնալովն ալ մեզի գիշեր ու ցորեկ կը պատճառէ :

Հիմայ նայինք թէ երկիրս իր վրայ դառնալու ատեն ինչ աղդեցութիւն կը զգենու : Դախ երկիրս ինքն իր վրայ դառնալու ժամանակ այնպիսի աղդեցութիւն մը կը պատճառէ որ կերպուախոյ :